ՐԵԲՈՒՆԻ ԲԺՇԿԱԿԱՆ ԱԿԱԴԵՄԻԱ ՀԻՄՆԱԴՐԱՄ
МЕДИЦИНСКАЯ АКАДЕМИЯ ЭРЕБУНИ ФОНД
EREBUNI MEDICAL ACADEMY FOUNDATION

EREBUNI

Address: Titogradian 133, 0087, Yerevan, RA
Tel: +374(10)47-07-60, +374(99)00-67-67
info@erebuniacademy.am, www.erebuniacademy.am

Հաստատում եմ

Ռեկտոր Ա.Իսկիլիկյան

25.08.21

«ԵՐԵԲՈՒՆԻ» ԲԺՇԿԱԿԱՆ ԱԿԱԴԵՄԻԱ ՀԻՄՆԱԴՐԱՄՈՒՄ ՈՒՍՈՒՄՆԱՌՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ԹԵՍՏԱՅԻՆ ՍՏՈՒԳՄԱՆ, ՍՏՈՒԳԱՔՆԵՐԻ, ՔՆՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՆՑԿԱՑՄԱՆ ՈՒ ՀԱՆՁՆՄԱՆ ԿԱՐԳ

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐԸ

1. Սույն կարգում օգտագործվող ընդհանուր հասկացություններն են

1) Ուսումնառության արդյունք առարկայի մոդուլի ծրագրի բաղադրիչ, որն ունի հստակ սահմանված տևողություն և ուսումնառության արդյունքի ստուգմամբ սահմանվող ավարտ
2) Ուսումնառության արդյունքի գնահատական առարկայի մոդուլի յուրաքանչյուր տեսական ուսումնառության արդյունքի ստուգումից ուսանողի ստացած գնահատական, որը չի ամբողջացվում Գործնական ուսումնառության արդյունքի ստուգումը գնահատվում է «Ստացել է» կամ «Չի ստացել գրառումով:
3) Կիսամյակային գնահատական տվյալ կիսամյակում առարկայի մոդուլի ուսումնական պլանով նախատեսված բոլոր ուսումնառության արդյունքների ստուգումների գնահատականների թվաբանական միջին՝ տասնորդականի ճշգրտությամբ,
4) Տարեկան գնահատական առարկայի մոդուլի բոլոր կիսամյակային գնահատականների թվաբանական միջին տասնորդականի ճշգրտությամբ.
5) Ստուգարքի գնահատական առարկայի մողուլի գրավոր կամ բանավոր ստուգարքից ուսանողի ստացած գնահատական՝ չամբողջացված տասնորդականի ճշգրտությամբ
6) Քննության գնահատական առարկայի մոդուլի գրավոր կամ բանավոր քննությունից ուսանողի ստացած գնահատական չամբողջացված՝ տասնորդականի ճշգրտությամբ,
7) Ստուգարքային վերջնական գնահատական ստուգարքային առարկայի մոդուլի վերջնական ամբողջացված գնահատական, որն ամրագրվում է ստուգարքային տեղեկագրում
8) Քննական վերջնական գնահատական՝ քննական առարկայի մոդուլի վերջնական ամբողջացված գնահատական, որն ամրագրվում է քննական տեղեկագրում
2. Կիսամյակի ընթացքում տվյալ առարկայից ուսանողի գիտելիքները գնահատվում են ուսումնառության արդյունքների թեստային ստուգմամբ, քննությամբ կամ ստուգարքով:
3. Ուսումնառության արդյունքների ստուգումներն անցկացվում են կիսամյակի ընթացքում ամբիոնների կողմից տրամադրված ևԱկադեռմիայի ռեկտորի կողմից հաստատված ժամանակացույցով

. Ոչ ցիկլային առարկայի մոդուլի ստուգարքներն անցկացվում են կիսամյակի վերջում ռեկտորի կողմից նախապես հաստատված ժամանակացույցով:

5. Ոչ ցիկլային առարկայի/մոդուլի քննություններն անցկացվում են քննաշրջանի ընթացքում Ակադեմիայի ռեկտորի կողմից հաստատված ժամանակացույցով:

6. Ցիկլային առարկայի/թեստային ստուգումը,մոդուլի ստուգարքն ու քննությունն անցկացվում են տվյալ ցիկլի վերջին դասընթացի օրը:
7. Տվյալ կիսամյակի որոշակի ժամանակահատվածում իրականացվող ոչ ցիկլային մոդուլների ստուգարքներն ու քննություններն անցկացվում են մոդուլի վերջին դասի օրը:
8. Ցիկլային և ոչ ցիկլային առարկաների/մոդուլների մարման շրջաններն անցկացվում են ռեկտորի կողմից հաստատված ժամանակացույցով:
9. Ուսումնառության արդյունքների ստուգումները, տարբերակված ստուգարքներն քննությունները գնահատվում են 10 բալային համակարգով
10. Ուսումնառության արդյունքների թեստային ստուգման, ստուգարքների, քննությունների և դրանց մարման շրջանների համար գնահատման սանդղակը հետևյալն է.

1) «4.0»-ից ցածր գնահատականը համարվում է բացասական,

2) «4», «5» և «6» գնահատականները համարվում են բավարար.

3) «7» «8» գնահատականները համարվում են լավ,

4) 9» և «10» գնահատականները համարվում են գերազանց:

11. Չտարբերակված ստուգարքների դեպքում ստուգարքային վերջնական գնահատականի փոխարեն կատարվում է «Ստուգված» կամ «Չստուգված» գրառումը՝ համապատասխանաբար դրական կամ բացասական գնահատականի փոխարեն:

12. Ուսումնառության արդյունքների ստուգումների, կիսամյակային և տարեկան. քննությունների և ստուգարքների, ինչպես նաև քննական վերջնական և ստուգարքային վերջնական գնահատականներն ամրագրվում են ուսումնական մատյանների մեջ և էլեկտրոնային մատյաններում:

13. Ուսումնառության արդյունքների թեստայի, էլեկտրոնային ստուգումների, քննությունների և ստուգարքների գնահա տականներն ամբիոնների կողմից տրամադրվում են Ակադեմիա ոչ ուշ, քան տվյալ ուսումնառության արդյունքի ստուգմանը, քննությանը և ստուգարքին հաջորդող աշխատանքային օրը:

14. Քննական վերջնական և ստուգարքային՝ վերջնական գնահատականներն ամրագրվում են Ակադեմիա կողմից ամբիոնին տրամադրվող համապատասխան տեղեկագրերում, որոնք նախապես հաստատվում և կնքվում են Ակադեմիայի ուսումնական մասի կողմից:

15. Ցիկլային առարկաների մոդուլների պարապմունքներից բաց թողնված դասերը լրացվում են իսկ քննություններն ու ստուգարքները ուսանողը հանձնում է մարման շրջանում: Բաց թողնված դասերի լրացումը կատարվում է հետևյալ սկզբունքով.
1) Մեկ շաբաթ տևողությամբ ցիկլային դասընթացի դեպքում անգամ մեկ օրվա բացակայությունը լրացվում է:
2) Երկու շաբաթ տևողությամբ ցիկլային դասընթացի դեպքում՝ մեկ օրվա բացակայությունը չի լրացվում, իսկ մեկից ավելի բացակա օրերը լրացվում են,
3) Երեք շաբաթ տևողությամբ ցիկլային դասընթացի դեպքում երկու օրվա բացակայությունը չի լրացվում, իսկ երկուսից ավելի բացակա օրերը լրացվում են
16. Ցիկլային առարկաների մոդուլների դասընթացներին 5 րոպեից ավել ուշացումով ներկայանալու դեպքում ամբողջ ժամանակով՝ ներկա չգտնվելու

17. Ցիկլային առարկայից մոդուլից կամ առարկաներից մոդուլներից գումարային մինչև 80 ակադեմիական ժամ հարգելի բացակայության դեպքում ուսանողին՝ հնարավորություն է տրվում բաց թողնված ժամերն ամբողջությամբ լրացնել ըստ ռեկտորի հրամանով սահմանված ժամանակացույցի, իսկ մարման շրջանում ուսանողը կարող է օգտվել քննությունը, կամ ստուգարքը երկու անգամ հանձնելու իրավունքից եթե թույլ են տալիս մարման ժամկետները:

18 Ցիկլային առարկայից մոդուլից՝ կամ առարկաներից/ մոդուլներից գումարային մինչև 80 ակադեմիական ժամ անհարգելի բացակայության դեպքում ուսանողին հնարավորություն է տրվում բաց թողնված ժամերն ամբողջությամբ լրացնել վճարովի սկզբունքով՝ ըստ ռեկտորի հրամանով սահմանված ժամանակացույցի, իսկ մարման շրջանում ուսանողը կարող է օգտվել քննությունը կամ ստուգարքը երկու անգամ հանձնելու իրավունքից եթե թույլ են տալիս մարման ժամկետները:

19. Ավարտական կուրսերի երկրորդ կիսամյակում ուսումնական պլանով նախատեսված առարկայից մոդուլից կամ առարկաներից/մոդուլներից՝ գումարային մինչև 80 ակադեմիական ժամ հարգելի բացակայության դեպքում ուսանողին հնարավորություն է տրվում կիսամյակի ընթացքում, մինչև ամփոփիչ ատեստավորումը, Ակադեմիայի ռեկտորի կողմից սահմանված ժամանակացույցով ամբողջությամբ լրացնելու բաց թողնված ժամերը օգտվել քննությունը երկու անգամ հանձնելու իրավունքից եթե թույլ են տալիս ժամկետները:

20. Ավարտական կուրսերի երկրորդ կիսամյակում ուսումնական պլանով նախատեսված առարկայից/մոդուլից կամ առարկաներից մոդուլներից գումարային մինչև 10 ակադեմիական ժամ անհարգելի բացակայության դեպքում ուսանողին հնարավորություն է տրվում կիսամյակի ընթացքում, մինչև ամփոփիչ ատեստավորումը, ռեկտորի կողմից սահմանված ժամանակացույցով ամբողջությամբ լրացնելու բաց թողնված ժամերը վճարովի հիմունքներով և օգտվել քննությունը երկու անգամ հանձնելու իրավունքից եթե թույլ են տալիս ժամկետները:

21. Քննության, ստուգարքի ուսումնառության արդյունքի ստուգման ժամանակ ուսանողի ինքազգացողության վատացման դեպքերում ուսանողը պարտավոր է դիմել քննասենյակում գտնվող քննության պատասխանատուներից մեկին՝ բժշկական օգնություն ստանալու կամ քննությունը դադարեցնելու հարցով:

Պատասխանատուն պարտավոր է հրավիրել բուժկետի պատասխանատուին

22 . Կիսամյակի ընթացքում, տվյալ առարկայի մոդուլային ծրագրում առկա յուրաքանչյուր տեսական ուսումնառության արդյունքն ավարտվելուց հետո կատարվում է mսումնառության արդյունքի թեստային ստուգում

23. Կիսամյակի ընթացքում 3 և ավելի տարբեր առակաների/ մոդուլների ուսումնառության արդյունքի և 1 անբավարար գնահատականի կամ անհարգելի չներկայանալու դեպքում տվյալ առարկաները /մոդուլների չի վերահանձնվում և ուսանողը հեռացվում է Ակադեմիայից:

24. Տեսական ուսումնառության արդյունքի ստուգմանն անհարգելի պատճառով չներկայացած կամ դիմում չներկայացրած ուսանողը ուսումնառության արդյունքի լրացմանը չի թույլատրվում և տվյալ ուսումնառության արդյունքի գնահատական է համարվում 0-ն:

25. Ուսանողը մեկ օրվա ընթացքում կարող է մասնակցել առավելագույնը երկու առարկայի/մոդուլի տեսական ուսումնառության արդյունքի (կամ արդյունքների) լրացմանը:

IV. ՍՏՈՒԳԱՐՔՆԵՐ

26. Գործնական ուսումնառության արդյունքների ստուգմամբ ստուգարքային առարկաներից կիսամյակի վերջում անցկացվում է թեստային ստուգարք ռեկտորի կողմից՝ հաստատված ժամանակացույցով: Ցիկլային առարկայի մոդուլի դեպքում ցիկլի վերջում ուսանողը հանձնում է թեստային, ստուգարքը:

27. Գործնական հմտությունների ստացմամբ՝ ստուգարքների դեպքում ստուգարքի տևողությունը՝ կախված է գործնական առաջադրանքի կատարման համար անհրաժեշտ ժամանակից: Բանավոր ստուգարքների դեպքում յուրաքանչյուր ուսանողի պատասխանի համար հատկացվում է ոչ ավել քան 10 րոպե:

28. Թետային գրավոր ստուգարքների դեպքում օգտագործվում է առնավազն 4 տարբերակը

29. Տեսական ուսումնառության արդյունքների ստուգմամբ՝ առարկայի մոդուլի ստուգարքային վերջնական գնահատականը ձևավորվում է հետևյալ կերպ

30. Գործնական ուսումնառության արդյունքների սառոգմամբ և ցիկլային առարկայի մոդուլի դեպքում ուսանողը հանձնում է թեստային ստուգարք: Ստուգարքի ամբողջացված թվանշանը հանդիսանում է տվյալ առարկայի մայոլի ստուգարքային վերջնական գնահատականը

31. Առաջին և երկրորդ մարման շրջաններում գործնական ուսումնառության արդյունքների ստուգմամբ և ցիկլային առարկայի մոդուլի ստուգարքային վերջնական գնահատականը որոշվում տվյալ մարման շրջանում ուսանողի վերահանձնած ստուգարքի գնահատականի ամբողջացման

32. Երկրորդ մարման շրջանի ավարտից հետո որևէ ստուգարքային առարկայից մոդուլից կամ առարկաներից մոդուլներից բացասական գնահատական ունեցող ուսանողները հեռացվում են Ակադեմիայից:

V. ՔՆՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

33. Տեսական և գործնական ուսումնառության արդյունքների ստուգմամբ քննական առարկաներից անցկացվում է թեստային քննություն՝ Ակադեմիայի ռեկտորի կողմից հաստատված քննաշրջանի ընթացքում:

34. Քննության ժամանակ օգտագործվում է առնվազն 4 տարբերակ

35. Եթե քննական առարկան ուսուցանվում է մեկ կիսամյակ, ապա քննական տեստերն ընտրվում են տվյալ կիսամյակի թեստային բանկից Երկու կիսամյակի ընթացքում ուսուցանվող առարկայի դեպքում քննական թեստերն ընտրվում են երկու կիսամյակների թեստային բանկից:

36. Քննական տոմսերը պատրաստվում են ամբիոնում և հաստատվում ամբիոնի վարիչի կազմից քննությունից առնվազն 10 աշխատանքային օր առաջ:

37. ՈՒսումնառության արդյունքի ստացմամբ ցիկլային քննական առարկայի մոդուլի դեպքում, եթե քննական վերջնական գնահատականն անբավարար է, ապա առաջին մարման շրջանում վերահանձնում է թեստային քննությունը, եթե առաջին մարման շրջանում՝ քննական վերջնական գնահատականն անբավարար է, ապա ուսանողը երկրորդ մարման շրջանում՝ վերահանձնում է թեստային քննությունը

38. Երկրորդ մարման շրջանի ավարտից հետո որևէ քննական առարկայից մոդուլից բացասական քննական վերջնական գնահատական ունեցող ուսանողները հեռացվում են Ակադեմիայից: